ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 17 » մարտի 2018թ.

Ժամը՝ **11** ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս. Անանյան, Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Միրզոյան, Լ. Նիկողոսյան
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ.Վարդանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության մասին,

1.2. Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի մարտի 12-ին, Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվել է սույն թվականի մարտի 16-ին, համաձայն որի մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՎԵԲ» ՍՊԸ-ին,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը,

3.3 Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «ՎԵԲ» ՍՊԸ-ին, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	_____	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Ս. Անանյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Գ. Միրզոյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Լ. Նիկողոսյան
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	_____	Հ.Վարդանյան